

## ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ Ի ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ

10-13 ԱՊՐԻԼ 1941

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութան առբիւ. Սուրբ Էջմիածնի մեջ գումարուելիմ Ազգային-Եկեղեցական Ժողովին մասնակցելու համար Միաբանութեանս կողմէ պատգամաւոր ընտրուած Սուրբ Արուոյս Լուսարարացեալ Գեր. Տ. Կիւրեղ Մ. Վարդապետ Իւրայեղեան Նոր-Ջուղայեան Ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր զրկած է սարուոյս Յունիս 9 բուականաւ նամակ մը, ուր ներփակած է՝ ա) Ամենայն Հայոց Հայրապետութեան Ամեն. Տեղակալին 2 Մայիս 1941 բուակիր եւ Թիւ 221 նամակը եւ ը) Սուրբ Էջմիածնի մեջ գումարուած Ազգային-Եկեղեցական Ժողովի Ա. Բ. եւ Գ. նիստերու արձանագրութեանց, զ) Սուրբ Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի ուրբամեայ (1932-1941) գործունեութեանց: Զեկուցման կամ Տեղեկագրի, զ) Ազգային-Եկեղեցական Ժողովի Դեկլարացիայի եւ է) Մանդատային Յանձնաժողովի Զեկուցման պատճենները:

Սոյն գրութիւնները Տեղակալ Ամեն. Տ. Գեորգ Ս. Արքեպիսկոպոսի փափաքին համաձայն կը սպառուին ՍԻՈՆ-ի ներկայ Յուլիս-Օգոստոսի միացեալ համարին մեջ, ու անոնց արտաս գրութիւնները Ամեն. Ս. Պատրիարք հօր կողմէ պիտի զրկուին Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի կողմէ նշանակուած հետեւեալ պատրիարքական եւ առաջնորդական բեմերուն:

1. Կ. Պոլսոյ Ամենապատիւ Պատրիարք Տ. Մեսրոպ Ս. Արքեպիսկոպոս Նարոյեանին,
2. Հիւսիս սյին Ամերիկայի բեմի Առաջնորդ Գերաւորհ Տ. Գարեգին Ս. Արքեպիսկոպոս Յովսէփեանին,
3. Գալիֆօրնիայի բեմի Առաջնորդական Տեղապան Գեր. Տ. Վարդան Մ. Վրդ. Գապարեանին,
4. Հարաւային Ամերիկայի Հայրապետական Պատուիրակ Գերաւորհ Տ. Գարեգին Ս. Արքեպիսկոպոս Խաչատրեանին,
5. Ռուսանիոյ Հայոց Առաջնորդ Գեր. Տ. Յուսիկ Ս. Արքեպիսկոպոս Զոհրաբեանին,
6. Ասրպատականի Հայոց Առաջնորդ Գեր. Տ. Ներսէս Ս. Արքեպիսկոպոս Մելիք-Թանգեանին,
7. Իրանահնդկաստանի բեմի Կրօնական Խորհուրդին,
8. Յունաստանի Հայոց Առաջնորդ Գեր. Տ. Կարապետ Ս. Արքեպիսկոպոս Մազլըմեանին,
9. Պուլկարիոյ Հայոց Առաջնորդական Փոխանորդ Գեր. Տ. Գրիգոր Մ. Վրդ. Կարապետեանին,
10. Եւրոպայի Հայոց Առաջնորդ Գեր. Տ. Արաւազ Ս. Արքեպիսկոպոս Սիւրմէեանին,
11. Մարսէլի բեմի Հայոց Առաջնորդութեան,
12. Իրաքի Հայոց Առաջնորդական Տեղապան Արժ. Տ. Գրիգոր Քանանայ Յակոբեանին, եւ
13. Եկիպսանոյ առաջնորդական Փոխանորդ Գեր. Տ. Մամբէ Ս. Եպիսկոպոս Սիրունեանին: